



**Տեխնիկական բնութագիր
Թիրախ խմբերի շրջանում ֆոկլուս խմբային քննարկումներ իրականացնելու,
թիրախ խմբերի կարիքները վեր հանելու, անցումային պլանը վերլուծելու և
առաջարկությունների փաթեթ մշակելու համար**

Ընդհանուր իրավիճակ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) «Վնասի նվազեցման եվրասիական կոալիցիայի» (EHRA) ֆինանսական աջակցությամբ մեկնարկել է «Ապահովելով անցումային շրջանում ՄԻԱՎ-ի և ՏԲ-ի ծառայությունների կայունությունը Հայաստանում թիրախ խմբերի համար» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել հետազոտություն Հայաստանի անցումային պլանում թիրախ խմբերի (SUS, ԿՍԿ, տրանս* անձինք) կարիքների վերաբերյալ, լսելի դարձնել թիրախ խմբերի ձայնը:

Հետազոտության իրականացման համար ՆՍՀԿ-ն հայտարարում է փորձագետի բաց մրցույթ:

Փորձագետի հիմնական պարտականությունները

Փորձագիտական աշխատանքը պետք է ներառի հետևյալ գործողությունները՝

1. Մշակել ֆոկլուս խմբային քննարկման (ՖԽՔ) անցկացման ուղեցույց և իրականացնել 3 ՖԽՔ 10 SUS, 10 ԿՍԿ, 10 տրանս* անձանց շրջանում՝ հավաքելու ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների ոլորտում նրանց կարիքները: Կազմել ՖԽՔ-ների արդյունքների ամփոփ զեկույցներ:
2. Իրականացնել Հայաստանի անցումային պլանի վերլուծություն, թե որքանով են տրամադրվող ՄԻԱՎ-ի ծառայությունները համապատասխանում թիրախ խմբերի կարիքներին՝ հաշվի առնելով ՖԽՔ-ների արդյունքները:
3. Ելնելով հետազոտության արդյունքներից՝ մշակել առաջարկությունների փաթեթ՝ ուղղված անցումային պլանի բարելավմանը:
4. Ներկայացնել հետազոտության արդյունքները առաջիկա ՄՀՀ նիստի ընթացքում:

Հետազոտությունը պետք է իրականացվի հայերենով:

Ժամանակացույց

- Տեխնիկական բնութագիրը պետք է իրականացվի մինչև 2022 թվականի ապրիլի 20-ը:
- Հետազոտության նախնական տարբերակը պետք է ուղարկվի ՆՍՀԿ-ին մինչև 2022 թվականի ապրիլի 10-ը՝ դիտարկումների և մեկնաբանությունների համար:

Ծառայությունների վճարը

Տեխնիկական բնութագրի աշխատանքը իրականացնելու համար փորձագետի վարձատրության չափը որոշվելու է մրցույթի ամփոփման ընթացքում: Փորձագետը պետք է ներկայացնի աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ օրերի քանակը և օրական վարձատրության չափը: Օրական վարձատրության վերջնական չափը կողմերի միջև համաձայնության հիման վրա է ձևավորում: Այն դեպքում, երբ փորձագետը չի նշում օրական վարձատրության չափը կամ ՆԱՅԿ-ն չի հաջողում համաձայնեցնել այն փորձագետի հետ, կազմակերպությունը կարող է չքնել պայմանագիրը և դիտարկել մրցույթին մասնակցած այլ փորձագետի ներգրավելու տարբերակը: Տեխնիկական բնութագրում ներառված աշխատանքը կատարելու համար ամբողջական վարձատրության չափը չի կարող գերազանցել 1,000,000 (մեկ միլիոն) դրամը, ներառյալ բոլոր հարկերը:

Գնահատումը

Դիմումների գնահատումը իրականացնելու է ՆԱՅԿ Խորհրդակցական խորհուրդը:

Այն փորձագետները, որոնք կունենան թիրախ խմբերի հետ աշխատանքի փորձ, կունենան առավելություն:

Պահանջվող որակավորումները և հմտությունները

- Ազգային մակարդակում ՄԻԱՎ-ի ծառայությունների տրամադրման, ֆինանսավորման վերաբերյալ գիտելիք,
- Շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ թիրախ խմբերի, առողջապահական ոլորտի փորձագետների, որոշում կայացնողների հետ աշխատանքի փորձ,
- Հանրային առողջության ոլորտում հետազոտություններ իրականացնելու աշխատանքային փորձ,
- Հարցաշարերի, զեկույցների և այլ փաստաթղթերի կազմման հմտություններ,
- ՄԻԱՎ-ի ոլորտում կատարված ուսումնասիրությունները նախընտրելի են,
- Անգլերեն և ռուսերեն փաստաթղթեր կարդալու կարողություն:

Ինչպե՞ս դիմել

Տվյալ թափուր հաստիքին դիմելու համար խնդրում ենք լրացնել հետևյալ [ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԸ](#) մինչև 2022 թվականի մարտի 5-ը՝ «Մատուցվող աշխատանքի/ծառայության անվանումը» դաշտում նշելով «Անցումային պլանի ուսումնասիրության փորձագետ»: